

8931



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Երջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

«12» 08 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱՋԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 159 - 24

Նախաձեռնող՝

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
Երևան քաղաք, Նորք-Մարաշ վարչական շրջան, Գ. Հովսեփյան 26

Գործունեությունը՝

Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանի Գ. Հովսեփյան 80
հասցեում հանրային հեռուստաընկերության
8-րդ հեռուստասպորտիայի կառուցում

Առդիր՝ 7 թերթ

ԲՓ № 159 - 24

«12» օգոստոսի 2024թ.

Հանրային հեռուստաընկերության 8-րդ հեռուստաստորագրության կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում

Նախաձեռնող՝ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեության կատեգորիա՝ «Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝ քաղաք Երևան, Նորք-Մարաշ վարչական շրջան


Ներածական մաս. Համաձայն ներկայացված շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտի /այսուհետ՝ հայտ/ նախատեսվում է Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանի Գ. Հովսեփյան 80 հասցեում կառուցել «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի /այսուհետ՝ Ընկերություն/ Հայաստանի հանրային հեռուստաընկերության 8-րդ հեռուստաստորագրության:

Գործունեությունն իրականացվելու է Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև ստորագրված հուլիսի 2018 թ. համաձայնագրի համաձայն: Կառուցապատման նախագծման համար հիմք է հանդիսացել Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրված 2023թ. մայիսի 11-ի N01/18-07/1-Դ-47020-257 ճարտարապետահատակագծային առաջադրանքը: Գործունեությունն իրականացվելու է անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված՝ 1.39 հա մակերեսով հողամասում, որի նպատակային նշանակությունը էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների է, գործառնական նշանակությունը՝ կապի:

Համաձայն Իրարկման պայմանագրի՝ Հեռուստաստորագրության հիմնական մասնաշենքի էսքիզային նախագծի կազմման, նախագծման և կառուցման աշխատանքներն իրականացնելու է չինական կողմը: Կառուցապատումն իրականացվելու է չինական ստանդարտներին համապատասխան՝ դրանք համադրելով հայկական ստանդարտների հետ:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /ՀՕ-110-Ն/ 14-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի ա. ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը Գ կատեգորիայի գործունեության տեսակ է:

Նկարագրական մաս. Կառուցապատվող հողամասը գտնվում է Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանում՝ Գ. Հովսեփյան փողոց 80 հասցեում, հանդիսանում է Ընկերության սեփականությունը:



Գործունեության տարածքն ուղղանկյունաձև է: Հյուսիս-հարավ երկարությունը մոտ 93 մ է, արևելք-արևմուտք երկարությունը՝ մոտ 70 մ, բարձրության տարբերությունը մոտ 20 մ:

Հողամասի մակերեսը կազմում է 1.39 հա, կառուցապատում նախատեսվում է իրականացնել ներկայցված տարածքի մի հատվածի վրա, որի մակերեսը կազմում է 7320.8 քմ:

Հողատարածքի հարևանությամբ գտնվում են Հայաստանի հանրային հեռուստաընկերությանը պատկանող շինություններ և Գ. Հովսեփյան փողոցը:

Համաձայն կատարված ուսումնասիրությունների, հորատման և արխիվային նյութերի տվյալների՝ ուսումնասիրվող տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են վերին պլիոցեն դարակարգի հրաբխային հոսքերը՝ դոլերիտային բազալտները, որոնց ծածկում են ժամանակակից տեխնոգեն և էյովիալ-դեյովիալ առաջացումները: Նախագծվող տարածքի երկրաբանալիթոլոգիական կտրվածքին մասնակցում են խճային գրունտներ, բազալտներ՝ բազալտ խարամի պարկերով:

Տարածքի կլիման արտահայտված ցամաքային բնույթ է կրում՝ շոգ և չոր ամառներով և չափավոր ցուրտ, անկայուն ձնածածկով ձմեռներով: Ջերմաստիճանի բացարձակ մինիմումը ցածր է՝ -30°C -ից, բացարձակ մաքսիմումը հասնում է $+42^{\circ}\text{C}$:

Տարածքում բնության և պատմամշակույթային հուշարձանները, ջրային ռեսուրսները բացակայում են:

Նախագծով նախատեսված է ժամանակակից ճարտարապետական, դիզայնեռական համապատասխան տեխնիկական և անվտանգային ապահովման լուծումներով կառույց: Ժամանակակից լուծումներին զուգահեռ կիրառվել են հայկական ճարտարապետությանը բնորոշ տարրեր և զարդանախշեր:

Կառուցապատման տեխնիկատնտեսական ցուցանիշներն են.

- հողամասի ընդհանուր մակերեսը՝ 13900 մ²,
- դիտարկվող տարածք՝ 7320.8 մ²,
- կառուցապատման մակերես՝ 3649,72 մ²,
- կանաչապատման մակերես՝ 1360.22 մ²,
- ճանապարհներ՝ 880.1 մ²,
- անջրանցիկ տարածքներ՝ 2310.86 մ²,
- շենքի բարձրությունը՝ 22.5 մ:

Հեռուստատուղիայի մասնաշենքն իրենից ներկայացնում է 2 հարկ վերգետնյա և 1 հարկ ստորգետնյա կառուց, շենքի բարձրությունը 22.5 մ է: Ստորգետնյա նկուղային հարկի բարձրությունը 6.0 մ է, առաջին հարկը՝ 5.4 մ, երկրորդ հարկը՝ 5.9 մ, հեռուստատեսային ստուղիայի սարքավորումների կախիչի տակ ճշգրիտ բարձրությունը 13.5 մ է: Տարածքում նախատեսվում է 5.76 քմ մակերեսով պահակակետ:

Հեռուստատեսային դահլիճ-ստուդիան նախատեսված է տեղակայել շենքի կենտրոնում, որի շուրջը տեղադրված են լինելու տարբեր օժանդակ տարածքներ:

Նկուղային հարկում նախատեսվում է հրդեհաշիջման ավազան և ջերմափոխանակման համակարգ՝ համապատասխան սարքավորումներով:

Կառույցն իր մեջ ներառում է հեռուստատեսային հաղորդումների նկարահանման և հեռարձակման համար նախատեսված դահլիճ, որը կահավորվելու է 400 շարժական նստատեղերով և ընդարձակ բեմով: Դահլիճը շրջապատված է աշխատանքային և տեխնիկական ապահովման սենյակներով (դիմահարդարման, ռեկվիզիտների, հանդիպումների, VIP ընդունարան, սերվերային, ցանցային, օդափոխման, ռեժիսորական, ծայնային կառավարման, հրդեհների վերահսկման սենյակներ, 3 սանհանգույց, որից մեկը հարմարեցված է հենաշարժողական խնդիրներով մարդկանց համար):

Հանդիսատեսի մուտքի ճեմասրահը տեղադրված է հարավային կողմում, որը ծառայում է նաև որպես սպասասրահ, որտեղից նախատեսվում է նաև մուտք դեպի սանհանգույցներ:

Ստուդիայի արևելյան և արևմտյան կողմերում նախատեսված են աշխատանքային մուտքեր և ելքեր՝ անձնակազմի, սպասարկման և անվտանգության ապահովման համար: 2-րդ հարկում նախատեսված է նաև բացօթյա հանգստի գոտի: Դերասանների և անձնակազմի տարածքը, ներառյալ՝ VIP հյուրասրահը, հանդերձարանը, նախասրահը, սպասասրահը և լոգարանը, տեղադրված են ստուդիայի արևմտյան կողմում: Արևելյան կողմից տեղադրված է ռեկվիզիտների և դեկորացիաների պահեստը, իսկ հյուսիսային կողմից՝ ադմինիստրատիվ սենյակն ու սարքավորումների սենյակը:

Երկրորդ հարկի հարավային կողմում տեղակայված են՝ հեռուստատեսային եթերի արտադրության կառավարման, ծայնային կարգավորման, լուսավորության կառավարման, սերվերային, ցանցային/համակարգչային ապահովման, հանդիպումների սենյակները և սանհանգուցը: Դրսի տանիքի հարթակը կարող է օգտագործվել նաև սարքավորումների արտաքին բլոկների համար:

Երթևեկության պահանջները բավարարելու համար հեռուստաստուդիայի շուրջը նախատեսվում է օղակաձև ճանապարհ՝ 4 մ լայնությամբ և 267 մ երկարությամբ: Հիմնական ճանապարհի լայնությունը կազմում է 7 մ:

Համաձայն հայտի՝ ներկայումս Ընկերության տարածքում առկա են ավտոկայանատեղիներ՝ մոտ 150 մեքենայի համար, և 50 մեքենայի համար՝ տարածքի մուտքի մոտ: Ընկերությանը պատկանող տարածքում /նախատեսվող գործունեության տարածքից դուրս/ հետագայում նախատեսված է ասֆալտապատ տարածք, որն ըստ անհրաժեշտության կարող է ծառայել որպես ավտոկայանատեղի՝ մոտ 40 մեքենայի համար: Տարածքի բազալտային գրունտներն անհնարին են դարձնում ստորգետնյա ավտոկայանատեղիի կառուցումը:


Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումն իրականացվելու է՝ համաձայն «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանների և պայմանագրի: Էլեկտրաէներգիայի փոխակերպման և բաշխման սենյակը տեղակայված է առաջին հարկում, որը հագեցած է բարձր և ցածր լարման բաշխիչ պահարաններով և տրանսֆորմատորներով: Էլեկտրաէներգիա մատակարարելու համար նախագծով նախատեսված է երկու 630 կՎԱ տրանսֆորմատոր: Տրանսֆորմատորը չոր SCB 13-10/0.40kV տիպի է, օդի սառեցմամբ, աղմուկի ցածր մակարդակի, իսկ էլեկտրահաղորդման ռեժիմը՝ Dyn11:

Արտակարգ իրավիճակների դեպքում էլեկտրամատակարարումն ապահովելու համար նախատեսվում են ունենալ երկու 500 կՎտ/625կՎԱ ընդհանուր հզորությամբ, դրսի անաղմուկ կոնտեյներային դիզելային գեներատորներ՝ 0.4 կՎ ելքերով, որոնք էլ ապահովելու են էլեկտրաէներգիայի մատակարարումը բոլոր բեռների համար:

Հեռուստաստուդիայի համար նախատեսված է կենտրոնացված ջեռուցման համակարգ: Ջերմային աղբյուրի /որը տեղադրված է Ընկերության «Խմբագրություն» մասնաշենքում/ առաջնային մատակարարման և վերադարձի ջրի ջերմաստիճանը 115 °C և 80 °C է: Ջեռուցման համակարգի ջրի համալրումը և մշտական ճնշումը կարգավորվում է ջերմափոխանակիչի միջոցով: Գազամատակարարումն իրականացվելու է համաձայն տրված տեխնիկական պայմանի:

Ջրամատակարարումը կիրականացվի գոյություն ունեցող ջրատարից՝ համաձայն «Վեոլիա ջուր» ՓԲԸ կողմից տրվող տեխնիկական պայմանի, որը միացված է համայնքային ջրամատակարարման ցանցին: Կոյուղին միացվելու է համայնքային կոյուղատարին:

Կառուցապատման ենթակա հողատարածքում բուսահողի հզորությունը կազմում է մոտ 20-25 սմ, հանվող բուսահողի ծավալը կազմում է 700 մ³: Շինարարական աշխատանքների ավարտից հետո հանված բուսահողը կօգտագործվի տարածքի բարեկարգման համար: Բուսահողի օգտագործումն ու պահպանումն իրականացվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության պահանջներին համապատասխան:



Կառուցապատման տարածքում առկա են մոտ 120-130 ծառ և թփուտներ, որոնց զգալի մասը՝ համաձայն Երևանի անտառապետության կողմից ներկայացված տեղազննման ակտի, գտնվում են կիսաչոր վիճակում: Աշխատանքների իրականացման արդյունքում նախատեսվում է նշված ծառերի և թփերի հատում: Որպես փոխհատուցում՝ Ընկերության կողմից Հրազդանի անտառտնտեսության մասնաճյուղի Երևանի անտառապետության տեղամասի գաջի գործարանին հարակից տարածքում անտառապատման համար համապատասխան 2.8 հա տարածքում իրականացվել է ծառատունկ:

Նախատեսվող շինարարության աշխատանքների իրականացման համար նախատեսվում է 2 փուլ՝ նախապատրաստական և հիմնական, ընդհանուր տևողությունը 36 ամիս: Նախապատրաստական փուլում կատարվելու են հետևյալ աշխատանքները.

- շինհրապարակի ժամանակավոր ցանկապատում հետիոտնային գլխածածկույթով,
- ժամանակավոր էլեկտրոմատակարարում և ջրամատակարարում,
- շիննյութերի և բետոնի ընդունման հարթակների պատրաստում,
- շինհրապարակի գիշերային լուսավորվածություն,
- հիմնական փուլում կատարվելու է մասնաշենքերի շինարարությունն՝ ըստ նշված

ժամանակացույցի և օրացույցային գրաֆիկի:

Համաձայն գնահատման հայտի՝ որպես շինհրապարակ դիտարկվելու է ամբողջ հողատարածքը:

Բոլոր տիպի շինմոնտաժային աշխատանքները կատարվելու են՝ պահպանելով շինարարական նորմերը, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները: Աղմուկ առաջացնող աշխատանքներն իրականացվելու են օրվա ցերեկային ժամերին:

Ապրանքային բետոնը շինհրապարակ է բերվելու պատրաստի վիճակում՝ բետոնատար ինքնաթափերի միջոցով ավտոմատ բետոնա-շաղախային հանգույցից: Ամրանային իրերը պատրաստվելու են հատուկ պոլիգոններում, մասամբ շին. հրապարակում:

Շինարարության ժամանակ օգտագործվելու են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսպատման բարձրորակ նյութեր, ավազ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստուկցիաներ, մետաղական կոնստուկցիաներ և այլն:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար: Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 2188.62 մ³/շին.ժամ: Շինարարության ժամանակահատվածի համար ընդհանուր ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (46 մարդ), ինչը կազմում է 1034.28 մ³/շին. ժամ. կամ 1.105 մ³/օր: 7320 մ³ ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը կկազմի 5975.28 մ³/շին. ժամ: Անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերն ուղղորդվելու են պարզարան, որտեղ կատարվելու է մեխանիկական նստեցում: Պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

Բանվորական և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շինհրապարակում կտեղադրվեն ժամանակավոր սանհանգույցներ, որոնք շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն:

Համաձայն հայտի՝ շինարարական աշխատանքների ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ՝ ավտոկոունկ, բետոնատար ինքնաթափ, եռակցման սարք, շարժական կոմպրեսոր, էքսկավատոր և այլն:

Կառուցապատման աշխատանքների նախագիծը ենթադրում է հողային աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 9150 մ³ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ և 4300 մ³ հետլիցք: Ավելցուկային 4850 մ³ ծավալով հողային զանգվածը կօգտագործվի տարածքի բարեկարգման համար: Հողային

ռեսուրսների պահպանության նպատակով շինարարական նյութերը տեղադրվելու են բետոնապատ մակերեսի վրա:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջանալու են տարբեր տեսակի թափոններ՝ կենցաղային աղբ (0,7տ/տարի) և շինարարական աղբ (80մ³): Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող 25200մ³ ծավալով: Շինարարական աղբը և հողն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր, իսկ կենցաղային աղբը՝ մոտակա աղբավայր:

Համաձայն գնահատման հայտի տարածքում բուսահողի հզորությունը 20-25 սմ է, ամբողջ հողամասում բուսահողի ծավալը գնահատվել է 700մ³, ինչի օգտագործումն իրականացվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության պահանջներին համապատասխան: Հողաբուսաշերտն օգտագործվելու է տարածքի կանաչապատման նպատակով:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի բարեկարգում և կանաչապատում՝ տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականությամբ:

Նախատեսվում է ունենալ կազմակերպված ոռոգման ցանց: Ցանցում լինելու են կաթիլային ոռոգման հանգույցներ և ռետինե խողովակներ՝ ամբողջությամբ ոռոգում կազմակերպելու համար: Կանաչապատ տարածքների ոռոգումն ջուրը կմատակարարվի՝ համաձայն «Երևան» ջրօգտագործողների ընկերության կողմից տրված տեխնիկական պայմանների:

Նախատեսվող գործունեության ազդեցությունները հիմնականում կապված են լինելու՝ քանդման, փորման, բեռնման, հողային, բետոնային աշխատանքների, հողային զանգվածների և թափոնների տեղափոխման, նյութերի օգտագործման, շինարարական տեխնիկայի ու մեխանիզմների շահագործման, ճանապարհների ծանրաբեռնվածության, արտակարգ իրավիճակների առաջացման հետ:

Համաձայն նախնական գնահատման հայտի՝ նախատեսվում են օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանմանը, դրանց արդյունավետ օգտագործմանը, թափոնների կառավարմանը, աղմուկի մակարդակի ու արտակարգ իրավիճակների ռիսկերի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում, այդ թվում՝

- շինարարության ընթացքում օդային ավազան փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով ջրցանի կատարում՝ օրական 2-3 անգամ,

- աղմկահարույց աշխատանքների իրականացումը հնարավորինս օրվա ցերեկային ժամերին,

- սորուն նյութերի պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրության թաղանթով,

- սորուն շինարարական նյութերի և հողային զանգվածի տեղափոխում՝ փակ ծածկով մեքենաներով,


- հեղուկ նյութերի պահումը հատուկ տակդիրների վրա՝ շրջակա միջավայր հնարավոր արտահոսքերը բացառելու համար,

- վտանգավոր արտահոսքերի դեպքում անմիջապես կլանիչ նյութերով մաքրում,

- մեքենաների և տեխնիկայի վրացումը շինհրապարակից դուրս՝ համայնքում գործող մասնագիտացված կետերում,

- տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումն իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ լցակայաններում կամ սպասարկման կետերում,

- բոլոր մեքենաների վրա համապատասխան խլացուցիչների տեղադրում՝ աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով,



- քանդման և շինարարության ընթացքում թափոնների տարանջատումը շինհրապարակում,
- տնկված ծառերի և խոտածածկի խնամք և մոնիթորինգ,
- մթնոլորտային օդ արտանետումների (փոշի, CO, NOx և այլն) որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ անգամ,
- օգտագործված յուղերով ու քսայուղերով հողերը հնարավոր աղտոտումից պահպանելու նպատակով հողերի մշտադիտարկում՝ երեք ամիսը մեկ անգամ,
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- շինարարության ընթացքում աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների կանոնների պահպանում և այլն:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվելու է տարեկան 350 հազ. դրամ, ամբողջ շինարարության ընթացքում՝ 875 հազ. ՀՀ դրամ:

Պատճառաբանական եզրահանգումներ. Ամփոփելով գնահատման և փորձաքննության արդյունքները՝ պետք է նշել, որ նախագիծը մշակվել է բնապահպանական ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրական պահանջներին և նորմատիվաիրավական ակտերին համապատասխան:

Նախագծի շրջանակներում իրականացվող շինարարությունը նշանավորում է Հայաստանի Հանրապետության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարությունների միջև բարեկամական հարաբերությունների հետագա խորացումը, ինչը նպաստում է երկկողմ հարաբերությունների ամրապնդմանն ու զարգացմանը և երկու ժողովուրդների միջև բարեկամության զարգացմանը:

Փորձաքննության ներկայացված գնահատման արդյունքում վերլուծվել են հնարավոր անցանկալի բնապահպանական ազդեցությունները շրջակա միջավայրի բաղադրիչների և բնակչության առողջության ու սոցիալ-տնտեսական պայմանների վրա, մշակվել են ազդեցությունների նվազեցման և կանխարգելման հիմնական ուղղությունները:

Երկրաբանական տեսակետից տարածքը բարենպաստ է կառուցապատման համար: Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները լինելու են շինարարության փուլում և կրելու են ժամանակավոր բնույթ:

Հայտի փորձաքննական գործընթացին մասնակցել են համապատասխան մասնագիտական կառույցները՝ առողջապահության, ներքին գործերի նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն, կադաստրի կոմիտեն, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները: Փորձաքննական գործընթացում գնահատման հայտն առաջարկություններով և դիտողություններով լրամշակվել է: Օրենսդրությամբ սահմանված կարգով Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանում իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում՝ նախատեսել լրացուցիչ միջոցառումներ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:

- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջները



- Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա սահմանված ժամերին՝ հնարավորինս նվազագույնի հասցնելով բնակելի տարածքներում աղմուկի և ճանապարհների առավելագույն բեռնվածությունը:
- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի համայնքապետարանի հետ համաձայնեցված:
- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը և խնամքը:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված՝ Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի Գ. Հովսեփյան 80 հասցեում հանրային հեռուստաընկերության 8-րդ հեռուստաստուդիայի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Իսաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի փոխտնօրեն՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝



Արմինե Վարդանյան